ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «27» մայիսի 2024թ.
ժամը 16:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,
Բացող անդամներ՝ Ա. Կատվալյան, Գ.Աղլամազյան,
Քարտուղար՝ Ս.Մելքոնյան,

<u>«ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի</u>
Գ.Բոշյան

«Գնումների համակարգող /քարտուղար/ Սյուզաննա Մելքոնյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 4 /չորս/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն, էլ.հասցե
1	«ՍՈՒԱՐ» ՍՊԸ	Ք.Երևան, Շենգավիթ ՎՇ, Բագրատունյաց 15-54, Suro4350@gmail.com
2	«Արման-Թաման» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Կարմիրգյուղ, Armenhovhannes88@mail.ru
3	«Վարդ-1» ՍՊԸ	Ք.Իջևան, Վասիլյան 69 Vard1spy@mail.ru
4	«Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ	Ք.Գավառ, Գ.Միքայելյան 19 gexarquniqnairi@mail.ru
5	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 54բ, 375040, llcdorproject@mail.ru, lil.poghosyan17@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտը ըստ չափաբաժինների՝
- **1-ին չափաբաժնի մասով՝** «ՍՈՒԱՐ» ՍՊԸ, «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ,
- **2-րդ չափաբաժնի մասով՝** «Արման-Թաման» ՍՊԸ, «Վարդ-1» ՍՊԸ,
- **3-րդ չափաբաժնի մասով՝** «Արման-Թաման» ՍՊԸ, «Վարդ-1» ՍՊԸ, «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ,
- **4-րդ չափաբաժնի մասով՝** «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/5 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

1-ին չափաբաժնի մասով՝

3.1) «ՍՈՒԱՐ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

3.2) «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Ոչ գնային չափանիշներ		Մասնակիցների անվանումները	
		Մասնակցին տրված միավորները	
Գնահատման չափանիշը	**Առավելագույն միավորը**	«ՍՈՒԱՐ» ՍՊԸ	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
Մասնագիտական փորձառություն	**40**	40	40
Աշխատանքային ռեսուրսներ	**30**	30	30
Ընդամենը	**70**	70	70

Մասնակիցները ներկայացրել են հետեւյալ գնային առաջարկները.

N	Մասնակցի անվանումը	Ծառայությունների անվանումը	Նախահաշվային արժեք	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5	6	7
1	«ՍՈՒԱՐ» ՍՊԸ	Գավառ քաղաքում, Նորատուս, Կարմիրգյուղ, Գանձակ, Սարուխան, Հայրավանք Գեղարքունիք, Լճափ եւ Ծովազարդ գյուղերում ասֆատապատման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ	13 920 000	3 470 000	-	3 470 000
2	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ			4 000 000	800 000	4 800 000

2-րդ չափաբաժնի մասով՝

3.3) «Արման-Թաման» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

3.4) «Վարդ-1» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված N1-ում /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարություն/ իրական շահառուների կայքհղումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները,
- Մասնակցի կողմից ներկայացրած հայտում բացակայում է հրավերի 2.4.1 կետի /ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներ/ պահանջներով՝ ինժեներ-հիդրոտեխնիկ Արամ Շախպարյանի դիպլոմը, անձնագիրը: Համաձայնագրերում նշված չէ թե ո՞ր չափաբաժինների նախատեսված ծառայությունների մատուցմանն է ներգրավվում աշխատակիցը:

3-րդ չափաբաժնի մասով՝

3.5) «Արման-Թաման» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

3.6) «Վարդ-1» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված N1-ում /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարություն/ իրական շահառուների կայքհղումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները,
- Մասնակցի կողմից ներկայացրած հայտում բացակայում է հրավերի 2.4.1 կետի /ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներ/ պահանջներով՝ ինժեներ-հիդրոտեխնիկի դիպլոմը, անձնագիրը: Համաձայնագրերում նշված չէ թե ո՞ր չափաբաժինների նախատեսված ծառայությունների մատուցմանն է ներգրավվում աշխատակիցը:

3.7) «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

4-րդ չափաբաժնի մասով՝

3.8) «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Առաջարկվող մասնագետ ինժեներ հիդրոտեխնիկ՝ Վլադիմիր Առաքելյանի համաձայնագրում նշված է, որ ներգրավվելու է 3-րդ չափաբաժնին նախատեսված ծառայության մատուցմանը, այն ինչ 4-րդ չափաբաժնի մասով նույնպես պահանջվում է ինժեներ-հիդրոտեխնիկ:
- Բացակայում է ջերմագազազմատակարարման և օդափոխության ոլորտի մասնագետի փաստաթղթերը և տեղեկություններ հավելված N3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/5 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի մայիսի 17-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/5 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.9 կետի պահանջները **կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «Վարդ-1» ՍՊԸ-ին և «Գեղարքունիք Նաիրի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 30/05/2024թ.-ը ժամը 18:00-ն, շտկել վերը նշված անհամապատասխանությունները** և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակիցների հայտերը կգնահատվեն հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվեն, իսկ շտկելու դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվեն հրավերով սահմանված կարգով:

2. ընթացակարգի բավարար գնահատված հայտ եւ նվազագույն գնային առաջարկի հիման վրա **ընտրված մասնակից ճանաչել «ՍՈՒԱՐ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 1-ին չափաբաժնի մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Անգործության ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

6) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մայիսի 31-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԿԱՏՎԱԼՅԱՆ
		Գ.ԱՂԼԱՄԱՋՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ